

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ (1918 թ. ՀՈՒԼԻՍԻ 3-5)

Գայանե Մախմուրյան

Պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ ggmakhm@hotmail.com

Հոդվածը ներկայացվել է 11.07.2020, գրախոսվել է 28.09.2020, ընդունվել է

տպագրության 03.11.2020

Ներածություն

Մեր աշխատություններում առիթ ենք ունեցել անդրադառնալու 1918 թ. հունիսին Քառյակ դաշինքի փլուզմանը, վրաց-գերմանական ռազմական համագործակցությանն ու նրանց՝ թուրքական զորքերի հետ ընդհարվելու հանգամանքներին: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ Թուրքիայի կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրի խախտումը և նրա «Արևելք» զորախմբի արշավանքը դեպի Թիֆլիս ու Բաքու անտեսում էին 1916 թ. սեպտեմբերի 28-ին կնքված թուրք-գերմանական համաձայնագիրը, ըստ որի՝ կողմերն իրավունք չունեին փաստաթղթեր ստորագրելու առանց մյուս կողմի հավանության: Այնինչ 1918 թ. հունիսի 4-ին Թուրքիայի ստորագրած Բաթումի պայմանագիրը կոպտորեն խախտում էր Բրեստ-Լիտովսկի դրույթները և ամենևին ձեռնտու չէր Գերմանիային: Ծանրագույն տարածքային պահանջներից բացի, Բաթումում ձեռք բերված տեքստը պետք է վավերացնեին Թուրքիան և Հայաստանի Հանրապետությունը Կ. Պոլսում մեկ ամսվա ընթացքում:

Արդեն 1918 թ. մայիսի վերջին օրերին Գերմանիայի արտգործնախարար Ռ. Ֆոն Կյուլմանը հանձնարարել է Կ. Պոլսում իր երկրի դեսպան Յ. Ֆոն Բեռնստորֆին Բարձր դռանը տեղյակ պահել պաշտոնական Բեռլինի դժգոհության մասին: Ըստ այդմ՝ Գերմանիան որոշում էր կայացրել դիմակայել թուրքական առաջխաղացմանը Անդրկովկասում և պահանջում էր կանգ առնել Բրեստ-Լիտովսկի պայմանագրում ամրագրված սահման-

ների վրա¹: Հունիսի 8-ին գերմանական հրամանատարությունը հայտնում է Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշային, որ չի ճանաչում Բաթումի պայմանագիրը: Հաջորդ օրը կայգերական գլխավոր շտաբի պետ, դաշտի մարաջախտ Պ. Ֆոն Հինդենբուրգը հրամայում է Էնվերին դուրս բերել թուրքական զորքերը Կովկասից, բայց ապարդյուն: Միաժամանակ, Թիֆլիսում երկրամասի երեք կառավարություններին կից Գերմանիայի հյուպատոս Ֆ.Վ. Ֆոն Շուլենբուրգը տեղյակ է պահում «Արևելք» զորախմբի հրամանատար Խալիլ փաշային, որ Վրաստանն ու նրա երկաթուղին հանդիսանում են իր երկրի շահերի ոլորտ: Բացի դրանից, հունիսի 7-ին վրացական կառավարությունն էլ նախազգուշացվել է, որ իր դաշնակցի հետ պետք է պատրաստ լինի վրաց-գերմանական և օսմանյան զորքերի հնարավոր ընդհարմանը:

Թուրք-գերմանական ռազմական բախումը և Անդրկովկասի ազդեցության գոտիների բաժանումը 1918 թ. հունիսին


Ըստ գերմանական և ԱՄՆ-ում հրապարակված տվյալների՝ բախումը տեղի է ունեցել հունիսի 10-ին²: Հայկական զորաբանակի շտաբը հայտնում է հունիսի 18-19-ին Քոլագերանի մոտ ծավալված ռազմական գործողությունների մասին³: Զիջելով ավագ մարտակցին՝ Էնվերը ստիպված էր պաշտոնից ազատել 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշային, որին փոխարինել էր Էսադ փաշան: Ու քանի որ դեպի Թիֆլիս տանող ճանապարհը այլևս փակ էր, Բաքուն հաստատվեց որպես օսմանյան զորախմբի հիմնական թիրախ:

1918 թ. հունիսի 17-ին Կովկասում կայգերական ռազմական առաքելության պետ Ֆ. Կրեսս Ֆոն Կրեսենշտայնը ստորագրում է թուրք-գերմանական ժամանակավոր համաձայնագիր. այն Թուրքիային էր տրամադրում Երևանի, իսկ Գերմանիային՝ Թիֆլիսի նահանգը:

¹ Տե՛ս, օրինակ, Հայոց ազգային խորհրդում 12.06.1918-ին հնչեցրած գերմանական հատուկ առաքելության պետ գեներալ Օ. Ֆոն Լոսովի հաղորդումը կամ նույն խորհրդում 25.06.1918-ին ստացած ՀՀ պատվիրակության անդամներ Հ. Օհանջանյանի և Ա. Զոհրաբյանի հեռագրերը. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 252 դարձ., 267 (այսուհետև՝ ՀԱԱ): Ավելի մանրամասն՝ Hovannisian 1967, 202-203, Ավետիսյան 1997, 258, 263, 267:

² Ավետիսյան 1997, 204:

³ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 97, թ. 26: Ավելի մանրամասն տե՛ս Махмурия 2019, 90:



Նկ. 1. 1918 թ. ռազմաքաղաքական զարգացումների միջավայրը

Տարածքային հարցի հետ, նաև այդ տերությունները կարգավորել էին իրենց տարանցման իրավունքները Անդրկովկասի երկաթուղիներն օգտագործելիս: Հունիսի վերջին արդեն Կովկասում կենտրոնացվել էին օսմանյան երեք բանակներ, որոնք պետք է գրավեին Բաքուն⁴: Նրանց թվում ներառված հարվածային 3-րդ բանակը ուներ չորս դիվիզիա, որոնք հսկում էին Բաթումի պայմանագրում նշված շրջանները և իրենց ազդեցությունը պետք է տարածեին Պարսկաստանի վրա: Այդ բանակի 5-րդ Կովկասյան դիվիզիան (իրամանատար՝ Մյուրսել փաշան) մտել էր Բաթումի պայմանագրով օսմանյան տիրապետությունից ազատ հայկական Լոռին, իսկ վրաց-գերմանական ստորաբաժանումները նահանջել էին հյուսիս՝ դեպի Կամենկա (Ձորագետ) գետի ափերին: Վերջիններս թուրքական զորքերի առաջ ճանապարհ էին բացում դեպի Ելիզավետպոլ ու Բաքու, իսկ Լոռին «կռվախնձոր էր դարձել Վրաստանի և Հայաստանի միջև»⁵:

Վրացիները ապարդյուն պնդում էին Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ) ղեկավարության հետ հանդիպելիս, որ, տնտեսական ու ռազմավարական նկատառումներից ելնելով, Լոռին ու Փամբակը հարկավոր է ներառել Վրաստանի կազմում, որպեսզի այս շրջանները խուսափեն օս-

⁴ Hovannisian 1967, 205.

⁵ Hovannisian 1967, 205, Hovannisian 1971, 53: Տե՛ս նաև Աբրահամյան 2013, 65-66:

մանյան ռազմագրավումից⁶: Իսկ թուրքերն էլ տվյալ երկրամասն ու գավառը չէին հանձնում ՀՀ վարչական ենթակայության՝ պատճառաբանելով, թե դրանք կարող են գրավվել վրաց-գերմանական դաշինքի ուժերով:

Վրաստանի հավակնությունը Լոռու և Փամբակի նկատմամբ և հայ-թուրքական բանակցությունները: Հովհաննես Թումանյանի հանդիպումը Վեհիբ փաշայի հետ

Նման համատեքստում՝ երբ լրանում էր Բաթումի պայմանագիրը վավերացնելու ժամկետը, Վեհիբ փաշան նախևառաջ 8.000 տղամարդ բռնի տարավ Ղարաքիլիսայից ու հայտնեց, թե նրանք «կվերադարձվեն հաշտությունը վավերացնելուց հետո» միայն⁷: Այնուհետև հունիսի 21-22-ին նա ժամանել է Դսեղ ու, Հովհաննես Թումանյանի գրությանն ի պատասխան, իր մոտ է հրավիրել բանաստեղծին: Սա միանգամայն հասկանալի է, քանի որ մեծ արվեստագետը ՀԱԽ-ի լիազոր ներկայացուցիչն էր խնդրո առարկա հայկական երկու շրջաններում: Զրույցը այնքան կարևոր էր, որ հունիսի 23-ին բանաստեղծը շտապ մեկնում է Թիֆլիս՝ Ազգային խորհրդին իրավիճակը ներկայացնելու համար⁸: Հաջորդ օրը նա խորհրդի անդամներին հայտնում է, որ Հայկական զորաբանակի հրամանատարությանն է ուղարկել Վեհիբի հուշագիրն ու իր մոտ հավաքած կարևոր այլ տվյալներ⁹:

Հունիսի 25-ին ՀԱԽ-ի փոխնախագահ Ա. Սահակյանը տեղեկացնում է օրենսդիրներին, որ հանդիպել է Գերմանիայի հյուպատոս Ֆ.Վ. Ֆոն Շուլենբուրգին ու նրանից իմացել, թե թուրք-գերմանական ռազմական դիմակայության հետ կապված բազմակողմ «բանակցություններ են սկսվելու Բաթումում, ցանկալի է, որ հայ ներկայացուցիչները լինեն այնտեղ»¹⁰: Ա. Սահակյանը առաջարկում է պատվիրակություն կազմել, բայց խորհրդի անդամներ Ս. Մամիկոնյանը, Ս. Հարությունյանը, Ս. Տիգրանյանը, Ն. Աղբալյանը և ՀՀ վարչապետի պաշտոնում հաստատված Հ. Քաջազունին գտնում էին, որ հայերի մասնակցությունը «գրգռիչ և վտանգավոր հանգա-

⁶ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 255 դարձ.-256: Նաև՝ Զամալեան 2011, 32, 1918 թ. դեկտեմբերին Բաքվի ՀԱԽ-ի կազմած տեղեկանքը «Армяно-грузинский конфликт по поводу границ»՝ Ասրյան 2009, 71:

⁷ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 257 դարձ.:

⁸ Մախմուրյան 2014, 246-247: Իմ պրպտումների ընթացքում այս թեմայով եղել են նաև այլ հրապարակումներ. տե՛ս Սուքիասյան 2020, 53-54:

⁹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 50-51 դարձ.:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 267:

մանք կարող է նկատվել Թուրքիայի նկատմամբ»¹¹: Ուստի առաջարկվում է ուղիղ հարաբերություններ վերսկսել օսմանյան հրամանատարության հետ: Ի տարբերություն Քառյակ տերությունների գործիչների, որոնք պնդում էին Բրեստ-Լիտովսկի պայմանները, Հ. Քաջազունին ընդգծեց Բաթումի պայմանագրի չվավերացրած լինելու հանգամանքը: Թուրքական նոր հարձակման վտանգից խուսափելու համար ՀԱԽ-ը ցանկանում էր բանակցել և քննարկման առարկա դարձնել ճանապարհների բացման խնդիրը: Նա Բաթումի պայմանագիրը չէր վավերացնում, բայց չէր էլ մերժում՝ հայերն աշխատում էին նրա ապագայի հարցը տեղափոխել Կ. Պոլիս, որտեղ գործում էր Ա. Ահարոնյանի պատվիրակությունը: Իսկ գաղթականության և ՀՀ սահմաններից թուրքական զորքերի հեռացման մասին խոսելը համարվում էր վաղաժամ:

Այնուամենայնիվ, 1918 թ. հունիսի 25-ին ՀԱԽ-ը որոշում է «բանակցություններ սկսել անմիջապես թուրք կառավարության ներկայացուցիչների հետ»¹²: Ընդ որում, հարկավոր էր այցելել Թիֆլիսում գտնվող Քառյակ դաշինքի պաշտոնատար անձանց «վաղն և եթ, նախագահի միջոցով»¹³: Հունիսի 26-ին վարչապետ Հ. Քաջազունին, Ա. Սահակյանն ու թարգմանիչ Մ. Թումանյանն այցելում են Ֆ. Կրեսսին¹⁴: Վերջինս խորհուրդ է տալիս մեկնել Բաթում ու բանակցել ինչպես օսմանյան 3-րդ բանակի նորանշանակ հրամանատար Էսադ փաշայի, այնպես էլ գերմանա-ավստրա-բուլղարական խմբակի ներկայացուցիչների հետ: Այդ եռակողմ միավորումը ծրագրել էր պնդել Բրեստ-Լիտովսկում ընդունված պայմանները: Նրանց պահանջին համաձայնելու դեպքում թուրքական բանակը պետք է երկաթուղային ազատ տարանցում ստանար մինչև Ջուլֆա՝ առանց Ալեքսանդրապոլ մտնելու հնարավորության: ՀՀ իշխանություններից ակնկալում էին իրենց բոլոր հնարավորություններով նպաստել Բաքվի պաշտպանության հայկական ուժերի զինաթափմանը: Հանդիպման ժամանակ Ֆ. Ֆոն Կրեսսը հյուրերին առաջարկեց միանալ իրենց ջանքերին ու մերժել 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում ստորագրած տեքստը:

Քաջազունին ու Սահակյանը պատասխանեցին գերմանացուն, որ Հայաստանի Հանրապետության դիմադրության թուլությունը, փախստա-

¹¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 267 դարձ.:

¹² ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 268:

¹³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 268:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 271:

կանները, սովը, նոր կոտորածների վտանգը ստիպեցին իրենց ընդունել Բաթումի վերջնագիրը, «սակայն այն հավատով, թե այս կացությունը երկարատև չի լինելու»¹⁵: Այժմ էլ ՀՀ-ի «նպատակն է բոլորի հետ բարեկամ»¹⁶ մնալ: Ֆ. Ֆոն Կրեսսը անցողակի տվեց Էսադ փաշայի անունը, և կողմերը բաժանվեցին: Հունիսի 27-ին, երբ Քաջազնունին Ազգային խորհրդում պատմում էր այդ հանդիպման և հայկական կողմի կրավորական պահվածքի մասին, Հովհաննես Թումանյանը հրաժարվեց Լոռիում, Ղազախում, Շամշադինում, Փամբակում ու Բորչալուում ՀԱԽ-ի լիազոր ներկայացուցչի պաշտոնից: Նամանավանդ, որ ՀԱԽ-ը չի դիմել Լոռվա ռազմական պաշտպանությանն ու չի պնդել այդտեղից օսմանյան ռազմուժի դուրսբերման անհրաժեշտության մասին: Բանաստեղծի գնահատականով՝ «կառավարության ապիկարությունը հասնում էր ոճրագործության»¹⁷:

ՀՀ պատվիրակության ձևավորումը՝ Բաթումում Էսադ փաշայի հետ բանակցելու համար

Այնուհետև 1918 թ. հունիսի 29-ին ՀԱԽ-ը մինչև ժամը 12.30-ը ունենդրում է Մ. Պապաջանյանի նամակն իր Վեհիբ փաշայի հետ հանդիպման մասին¹⁸: Վերջինս մտահոգ էր վրաց-գերմանական ռազմական դաշինքով, ուստի առաջարկեց կազմավորել հայ-թուրքական խառը զինուժ ու դրանով հակակշռել վրաց-գերմանական գործունը¹⁹: Վեհիբը հայերին հրավիրում էր Բաթում՝ զրուցելու, և խոստանում էր փոխառություն տրամադրել: Իսկ որպես Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածի կատարում՝ ՀՀ-ի իշխանությունները պետք է պատվիրակություն ուղարկեին Բաքու, որպեսզի տեղի հայկական ուժերը գերծ մնային քաղաքի պաշտպանությունից: Բուռն քննարկումներից հետո ՀԱԽ-ը կազմեց պատվիրակություն՝ ի դեմս Սամսոն Հարությունյանի (որպես խմբի նախագահ), Հովհաննես Թումանյանի, գեներալ Իվան Բաղրամովի և քարտուղար Երվանդ Միրզոյանցի: Նրանց հանձնարարվել է պնդել Հայաստանի Հանրապետության

¹⁵ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 271 դարձ.: Համանման որոշումն՝ «ագրեսիվ հարաբերություններ չստեղծել, դեպի Թուրքիան բարեկամական կապ պահպանելով» ձևակերպմամբ, ընդունվել է ՀԱԽ-ի 19.06.1918-ի նիստում (ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 262):

¹⁶ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 271 դարձ.:

¹⁷ Տե՛ս բանաստեղծի 28.06.1918-ի նամակը Գ. Խատիսյանին՝ Կ.Պոլիս. Թումանյան 1999, 287, հրաժարականը՝ 288:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 273 դարձ.:

¹⁹ Այդ մտահղացման մասին՝ Петросян 2019, 276-277:

կողմից չվավերացվող Բաթումի պայմանագրի պահանջները օսմանցիների կողմից հարգելու անհրաժեշտությունը: Ի դեպ, հենց ամսի 29-ին ֆոն Կրեսսը տեղյակ է պահել հայերին, որ Բաթումում հունիսի 4-ին ստորագրածը վավերացնելու կամ չվավերացնելու խնդիրն ամբողջությամբ տեղափոխվել է Կ.Պոլիս²⁰, որտեղ Բարձր դուռը միանշանակ չի հրաժարվում Բրեստ-Լիտովսկում իր համար գծված սահմաններից:

Նույն այդ օրերին ՀԱԽ-ում հնչում է հայերի խոստովանությունը, թե գերմանացիներն առաջարկում են չպաշտպանել նավթային մեծ կենտրոնը, որպեսզի Բաքուն դառնար «չեզոք, ոչ մի պետության չի պատկանի, բայց բոլորի համար ստեղծվում է ազատ հարաբերություններ, ...[և քաղաքը] ամենքին ծախի իր նավթը»²¹: Խորհրդի անդամները գնահատեցին, որ նման գաղափարը պարզապես միջոց է «հանգցնելու և քելու զորքը»²²: Իսկ Բաքուն չպետք է Կարսի օրն ընկներ: Ինչ վերաբերում է Թիֆլիսին, ապա քիչ ավելի ուշ Ֆ. ֆոն Կրեսսը հավելեց, որ թեև Էսադը հայցում էր նրա թույլտվությունը՝ «Վրաստանի միջոցով զորք ուղարկելու»²³ համար, սակայն ինքը կտրականապես մերժել է դրա հնարավորությունը:

Պատվիրակները Բաթում են մեկնել հունիսի 30-ին (այդ օրվանից մինչև հուլիսի 5-ը նրանք չեն մասնակցել ազգային բարձրագույն իշխանության նիստերին) կամ հուլիսի 1-ին²⁴: «Մեծ դժվարություններով» ծովափնյա քաղաք են հասել հուլիսի 2-ի²⁵ առավոտյան և հաջորդ օրը հանդիպել են Էսադ փաշայի հետ: Հանդիպումը կայացել է հուլիսի 3-ին, քանի որ հատկապես ամսի 3-ը նշված է ձեռագիր լրացված 3-րդ բանակի հեռագրային բլանկի վրա²⁶: Տեքստը լրացվել է Ա. Ահարոնյանի համար ֆրանսերենով ու հանդիպումից անմիջապես հետո, քանի որ հիշատակվում է նոր ճաշակած «սրտագին ընդունելության» մասին²⁷: Նկատենք, որ այս հեռագրի ֆրանսերեն մեքենագիր օրինակը և դրա ռուսերեն թարգմանու-

²⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 8: Ստույգ չէ Գ. Պետրոսյանի պնդումը, թե Բաթումի պայմանագիրն ուժի մեջ էր մտնում ստորագրման պահից (Петросян 2019, 288), քանի որ նրա հոդված 14-ում ամրագրված էր վավերացման գործընթացը:

²¹ ՀԱԱ, ֆ. 222 ց. 1, գ. 141, թ. 279 դարձ.:

²² ՀԱԱ, ֆ. 222 ց. 1, գ. 141, թ. 280:

²³ ՀԱԱ, ֆ. 222 ց. 1, գ. 141, թ. 286:

²⁴ Տե՛ս Կարապետյան 1992, 216:

²⁵ Ըստ Ս. Հարությունյանի՝ Բաթում ժամանելու «հետևյալ առավոտը» պատվիրակները տեսնվեցին Էսադի հետ: Տե՛ս Մախմուրյան 2014, 248:

²⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 37, 39-44:

²⁷ Une reception cordiale, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 40:

թյունը կրում են հուլիսի 4-ի ամսաթիվը: Միանգամայն հավանական է, որ հեռագիրն ուղարկվել է մեկ օր ավելի ուշ, թեև իրենց տեղեկագրով պատվիրակները շտապ պատասխան էին հայցում Ա. Ահարոնյանից ու մտադիր էին «հաջորդ օրվա առավոտը» թողնել բանակցությունների վայրը²⁸: Այնուամենայնիվ, նրանք Բաթումից մեկնել են հուլիսի 5-ին (կամ 4-ի գիշերը), ամսի 5-ի երեկոյան Թիֆլիսում էին²⁹ և հուլիսի 6-ին զեկուցեցին ՀԱԽ-ի անդամներին:

ՀՀ պատվիրակության 1918 թ. հուլիսի 3-ի քննարկումը Էսադ փաշայի հետ՝ Հովհ. Թումանյանի ելույթով հանդերձ

Ինչպե՞ս էր ընթացել հուլիսի 3-ի հանդիպումը: Բաթումի պայմանագրից ելնելով³⁰, հայերը պահանջում էին Հայաստանի Հանրապետության ենթակայության տակ դնել երկաթուղին, դուրս բերել թուրքական զորքերը Լոռուց ու Փամբակից և թույլատրել 400.000 գաղթականների տունդարձը: Այդպես է նշվել օսմանյան բանակի միջոցով ուղարկված Ս. Հարությունյանի, Հովհ. Թումանյանի, Ի. Բաղդամովի, Ե. Միրզոյանցի միանգամայն հավաստի հեռագրում³¹: Երեք օր հետո Թիֆլիսում ՀԱԽ-ին զեկուցելիս Ս. Հարությունյանը առանձնացրեց սահմանների և թուրք զինուժի ոչ թե դուրսբերման, այլ բռնություններին վերջ տալու հարցերը: Այդ կետը որպես ականատես Էսադին ներկայացրել էր Հովհ. Թումանյանը³²: Թուրք գեներալը պատասխանեց, թե Կարսի և Ալեքսանդրապոլի փախստականները կարող էին «այցելել» իրենց օջախները, զորքերը մնալու են վրաց-գերմանական ներխուժումը արգելելու համար, իսկ օսմանյան բանակի հեռացման և երկաթուղու հարցերի քննարկումը տեղափոխվում է Կ. Պոլիս. ինչպես Բաթումի պայմանագրի վավերացման խնդիրը, որի հետաձգման մասին հայտարարվել էր բանավոր, սակայն ՀՀ իշխանությունները դրա վերաբերյալ փաստաթուղթ չունեին՝ թեկուզ հեռագրի կամ

²⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 36:

²⁹ ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների 2020, հ. 1, 58:

³⁰ Վերջինը ձև տվեց Օսմանյան կայսրության սահմանին միայն, իսկ Անդրկովկասի պետությունների միջև բաժանագծերի հաստատումը իրենց ներքին գործն է համարվել: Տե՛ս Туманян 2012, 88:

³¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 39, 41: 4.07.1918-ին Ս. Մամիկոնյանը հաղորդեց ՀԱԽ-ում հանրապետությունում առկա 400.000 գաղթականների մասին, ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 282 դարձ.:

³² ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289:

համառոտ հուշագրի տեսքով:

Փաշան արգելում էր գաղթականների վերադարձը Ախալքալաք, հերքում էր Ղարաքիլիսայի եռօրյա կոտորածի կազմակերպված բնույթը, սակայն կշտամբում էր հայերին՝ թուրքական ստորաբաժանումներին անհանգստություն պատճառելու համար: Նրա մեղադրանքը բողոքի պարզունակ ձև չէր, այլ լայն կիրառում ստացած օսմանյան ռազմադիվանագիտական մի հնարք, որ ակնարկում էր նոր առաջխաղացման հնարավորությունը: Մանավանդ որ հանդիպումից հետո նա երրորդ կողմի միջոցով հասկացրեց այցելուներին ողջ Անդրկովկասում մեկ խնամատարություն հաստատելու իր ցանկությունը: Ի դեպ, Ս. Հարությունյանն էլ իր զեկուցման մեջ նշեց, թե Կ. Պոլիս հասցեագրած հեռագիրն ուղարկվել է հրամանատարի թույլտվությամբ³³, նշանակում է՝ հանդիպումից հետո, ինչպես սովորաբար լինում է նման պարագաներում: Հանդիպումից առաջ դեռևս բան չկա հաղորդելու:

Հարկավոր է արձանագրել նաև Բաքու ուղարկված պատվիրակության մասին բանավեճը, քանի որ հայկական կողմը պնդում էր, թե անկարող է ոչ միայն ազդել տեղի իշխանությունների վրա, այլև նույնիսկ հասնել այդ քաղաքը³⁴: Շոշափելի արդյունքների չհասնելու պայմաններում էսադն էլ զիջումներ չէր անում: Հուլիսի 4-ից հետո Երևանի վրա հարձակում չվերսկսելու, մայրաքաղաք զորքեր չմտցնելու փաստն արդեն իսկ խոսում էր Բաթումի պայմանագրի ոչ լիարժեք լինելու մասին: Այդ առումով տրամաբանական էր մինչև ամսի 4-ը քաղաքում հայ պատվիրակների մնալը և միայն հաջորդ օրը Թիֆլիս գնալը: Ու թեև գաղթականների կամ երկաթուղիների խնդիրներում առաջընթաց չկար, բանակցություններն ապարդյուն չէին: Նրանք գրանցել էին, որ «Արևելք» զորախմբի հիմնական հարվածը շրջանցում է վրաց-գերմանական պաշտպանության տակ գտնվող Թիֆլիսն ու միայն հայերով պաշտպանվող Երևանը: Թուրքական արշավանքն ուղղվում էր Բաքու, չնայած նա այդքան հեռու էր Բրեստ-Լիտովսկի և անգամ Բաթումի պայմանագրով նախատեսված սահմաններից: Իսկ հայկական կողմը խուսափեց հայ-թուրքական ռազմական դաշինքից և, շրջանցելով Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածը, չմասնակցեց Բաքվի հայկական ստորաբաժանումները զինաթափելու գործին:

³³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 դարձ.:

³⁴ Տե՛ս Էսադի 3.07.1918-ի հեռագիրը ՀԱԽ-ի նախագահությանը՝ արդեն անցկացրած բանակցությունների մասին, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 45:

Հայտնի է, որ 1918 թ. հուլիսի 6-ին ՀԱԽ-ում տված հաշվետվությունից հետո Հովհաննես Թումանյանը չմասնակցեց ՀՀ-ի ծավալած դիվանագիտական աշխատանքներին. նա հիասթափված էր Թիֆլիսի հայ քաղաքական ուժերի կրավորական կեցվածքից: Միաժամանակ մեծ բանաստեղծը ջերմորեն պնդում էր Հայոց ազգային խորհրդի Երևան տեղափոխելու և այնտեղ կառավարության՝ թուրքերին զսպողի դեր կատարելու անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ մեջբերենք դեռևս անտիպ նրա արտահայտությունը ՀԱԽ-ի հունիսի 24-ի նիստից: Ն. Աղբալյանի բողոքին, թե «Հայաստանի կառավարությունը հարկադրական մի բան է, մի կատարյալ բանտ, սպասենք մինչև կորոշվի բանակցությունների ելքը», Հովհաննես Թումանյանը արձագանքել է. «Կառավարությունը պետք է երկրում լինի, նրա գոյության մասին ժողովուրդը ոչինչ չգիտե: Դրությունը լուրջ է, պետք է գնալ, տեր դառնալ և կառավարել: Եթե երկիրը բանտ է, թող կառավարությունը մեր բանտում լինի: Եթե հեղինակավոր կառավարություն լինի, շատ բան կփոխվի, և թերևս շատ բան այսպես չլինէր, եթե այստեղ կառավարություն լինէր»³⁵:

Եզրակացություններ

Սրանով ամփոփվում են Հովհաննես Թումանյանի 1918 թ. դիվանագիտական առաքելության բովանդակությունն ու նրան վերաբերող մեր ունեցած հիմնական տվյալները: Մեր հանրապետության թումանյանագետները հնարավորություն ունեն խորությամբ ուսումնասիրելու և ավելի մանրամասն լուսաբանելու մեծ բանաստեղծի գործունեությունը Բաթումում 1918 թ. հուլիսի 2-5-ին՝ իր ժողովրդի պատմության այդքան կարևոր ու թեժ օրերին:

Գրականություն

Աբրահամյան Վ.Մ. 2013, 1918-1921 թթ. հայ-վրացական վիճելի տարածքների հարցի շուրջ. Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի «Գիտական տեղեկագիր», պրակ Բ, Գյումրի, էջ 62-73:
Ասրյան Ա. 2009, Հայ-վրացական հարաբերությունների պատմությունից (1918 թ.), Բանբեր Հայաստանի արխիվների, N 2, էջ 66-71:
Ավետիսյան Հ.Ա. 1997, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, «Բարձ-

³⁵ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 265-265 դարձ.:

- րագույն դպրոց», 436 էջ:
- Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Նամակներ (1905-1922 թթ.), Երևան, «Գիտություն», 772 էջ:
- Կարապետյան Լ.Մ. 1992, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (Դրվագներ), Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 256 էջ:
- Մախմուրյան Գ.Գ. 2014, Հովհ. Թումանյանի ելույթները Հայոց Ազգային խորհրդի և Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցության նիստերում (1918 թ. ապրիլ – հուլիս), Պատմաքանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 237-250:
- Ջամալեան Ա. 2011, Հայ-վրացական կնճիռը, Երևան, «Լուսակն», 244 էջ:
- Սուքիասյան Հ. 2020, Հայ-թուրքական բանակցությունները Բաթումում 1918 թ. հուլիսին, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, Երևան, էջ 50-61:
- Махмуриян Г.Г. 2019, От Сардапата до Батума: армянская эпопея и период полураспада Четверного союза (апрель – июль 1918 г.), Պատմաքանասիրական հանդես, N 3, Երևան, с. 83-95.
- Петросян Г.А. 2019, Закавказье в дипломатических перипетиях: становление Армянской независимости (февраль 1917 –июнь 1918 гг.), Երևան, «ЕГУ», 324 с.
- Туманян М.Г. 2012, Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Երևան, «Институт истории НАН РА», 471 с.
- Hovannisian R. 1967, Armenia on the Road to Independence, 1918, Berkeley & Los Angeles, “University of California Press”, 364 p.
- Hovannisian R. 1971, The Republic of Armenia, in 4 vols., vol. I The First Year, 1918-1919, Berkeley & Los Angeles, “University of California Press”, 547 p.

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ
ԲԱԹՈՒՄՈՒՄ (1918 թ. ՀՈՒԼԻՍԻ 3-5)**

Գայանե Մախմուրյան

Ամփոփում

Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև 1918 թ. հունիսի 4-ին կնքված Բաթումի պայմանագիրը առաջացրեց Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի դժգոհությունը: Նույն հունիսին թուրքական զորքերը բախվեցին վրաց-գերմանական զինուժի հետ: Պնդելով 1918 թ. մարտի 3-ին կայացած Բրեստ-Լիտովսկի պայմանագրի դրույթները՝ Քառյակ դաշինքը բա-

նակցություններ է սկսել Կ.Պոլսում, որտեղ հրավիրվել են Անդրկովկասի բոլոր հանրապետությունների պատվիրակությունները: Հաշվի առնելով իր քայքայված վիճակը՝ Հայաստանը չէր մերժում Բաթումի պայմանագիրը, բայց չէր էլ վավերացնում այն: 1918 թ. հունիսի 29-ին Հայոց ազգային խորհուրդը հանձնարարեց Սամսոն Հարությունյանին, Հովհաննես Թումանյանին, գեներալ Իվան Բադրամովին ու Երվանդ Միրզոյանցին բանակցել օսմանյան 3-րդ բանակի հրամանատար Էսադ փաշայի հետ: Հովհաննես Թումանյանը հունիսի 21-22-ին հանդիպել է նույն բանակի նախորդ հրամանատար Վեհիբ փաշայի հետ, այնուհետև հունիսի 30-ին կամ հուլիսի 1-ին այլ պատվիրակների հետ մեկնել է Բաթում: Զրույցը կայացել է 1918 թ. հուլիսի 3-ին, քննարկվել են սահմանների, գաղթականների, երկաթուղու, թուրքական զորքի՝ Լոռուց և Փամբակից դուրսբերման հարցերը: Մեծ բանաստեղծը պահանջում էր վերջ տալ բանակի բռնություններին, իսկ ՀՀ-ին հրավիրել էին զինաթափելու Բաքուն պաշտպանող հայկական զնդերը: Հայկական կողմը կարողացել է տեղափոխել վավերացման խնդիրը Կ. Պոլիս, իսկ Էսադը չի բերել իր զորքերը Երևան: Նրա ստորաբաժանումներն արշավեցին Բաքու: Իսկ պատվիրակությունը հուլիսի 4-ին կամ 5-ին մեկնեց Թիֆլիս և ամսին 6-ին զեկուցում ներկայացրեց Հայոց ազգային խորհուրդ:

Բանակի բառեր՝ Հովհ. Թումանյան, Ս. Հարությունյան, 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետություն, Հայոց ազգային խորհուրդ, Բաթումի պայմանագիր, Լոռի, Էսադ փաշա:

УЧАСТИЕ ОВАНЕСА ТУМАНЯНА В ДИПЛОМАТИЧЕСКОЙ МИССИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В БАТУМЕ (3–5 ИЮЛЯ 1918 г.)

Гаянэ Махмурян

Резюме

Батумский договор от 4 июня 1918 г. между Турцией и Республикой Армения вызвал недовольство Германии, Австро-Венгрии и Болгарии. В том же июне вспыхнули военные столкновения между Турцией и германогрузинским блоком. Настаивая на Брестском мире от 3 марта 1918 г., Четверной союз начал переговоры в Константинополе, куда пригласил делегации всех республик Закавказья. Ввиду своей слабости Армения не оспаривала Батумский мир, но и не ратифицировала его. 29 июня 1918 г. Армянский национальный совет делегировал Самсона Арутюняна, Ованеса

Туманяна, генерала Ивана Баграмова и Ерванда Мирзоянца на переговоры с командиром 3-ей османской армии – Эссадом-пашой. Ованес Туманян, после встречи 21-22 июня с прежним командиром той же армии Вехибом-пашой, 30 июня или 1 июля выехал в качестве члена делегации в Батум, где 3 июля 1918 г. состоялась двусторонняя встреча. Обсуждались вопросы границ, беженцев, железной дороги, вывода турецких войск из Лори и Памбака, Ованес Туманян говорил о необходимости прекратить насилие с их стороны. Прозвучало также требование, чтобы РА призвала к разоружению силы самообороны Баку. Армянской стороне удалось перенести вопрос ратификации Батумского договора в Константинополь, а Эссад воздержался от вторжения в Ереван. Подчиненные ему войска двинулись на Баку. Делегация же выехала 4-го либо 5 июля в Тифлис и 6-го числа представила отчет Национальному совету.

Ключевые слова – Ов. Туманян, С. Арутюнян, Республика Армения 1918–1920 гг., Армянский национальный совет, Батумский договор 1918 г., Лори, Эссад-паша.

PARTICIPATION OF HOVHANNES TUMANYAN IN THE DIPLOMATIC MISSION OF THE REPUBLIC OF ARMENIA AT BATUM (1918, JULY 3–5)

Gayane Makhmourian

Abstract

The Treaty of Batum, signed on June 4, 1918, between Turkey and the Republic of Armenia incited discontent among leaders of Germany, Austro-Hungary and Bulgaria. On the same month of June it turned into the military conflict between Turkey and Georgian-German bloc. The Quadruple Alliance insisted on the Treaty of Brest-Litovsk, concluded on March 3, 1918; so it initiated negotiations at Constantinople and invited there delegations of all Transcaucasian republics. Armenia was too weak to contest the Treaty of Batum; however, it did not ratify it either. The Armenian National Council had appointed on June 29, 1918, Samson Harutyunian, Hovhannes Tumanyan, General Ivan Baghramov and Ervand Mirzoyants as a delegation that would negotiate with the Commander of the 3rd Ottoman Army Essad Pasha. After an interview on June 21-22 with the previous Commander of the same Army Vehib Pasha, Hovhannes Tumanyan departed on

June 30 or July 1 for Batum as a member of delegation. The bilateral debate took place on July 3, 1918. They discussed the issues of frontiers, refugees, railways, of the withdrawal of Turkish troops out of Lori and Pambak, Hovhannes Tumanyan stressed the necessity to cease the outrages, committed by soldiers; and the Republic of Armenia was urged to plea the forces of the self-defense at Baku to disarm. The Armenian side had successfully transferred the matter of ratification to Constantinople; and Essad Pasha abstained from invasion to Yerevan. However, his subordinates carried out an offensive into Baku. The delegation itself had departed for Tiflis on July 4 or 5; they reported back to the National Council on July 6, 1918.

Key words – Hovh. Tumanyan, S. Harutyunian, Republic of Armenia 1918-1920, Armenian National Council, Treaty of Batum 1918, Lori, Essad Pasha.